ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր՝ 3.2-717)

ա) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համակեցության կանոնների պահպանման ապահովման նպատակով կազմակերպվող միջոցառումներին.
բ) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Երևան քաղաքի ավագանու կողմից հաստատված կանոնների պահանջների պահպանման ապահովման նպատակով կազմակերպվող միջոցառումներին.
գ) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում զանցանքների բացահայտման, կանխարգելման, նվազեցման, արձանագրման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ կազմակերպվող միջոցառումներին.
դ) մշտապես վերլուծում է իր կողմից կազմակերպվող գործունեությունը և իրավիճակի վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկություններ ներկայացնում Բաժնի պետին՝ իր կողմից սպասարկվող վարչական տարածքներում հասարակական կարգի պահպանումը արդյունավետ կազմակերպելու, գործունեության կազմակերպմանը վերաբերող խնդիրներին օպերատիվ լուծում տալու համար.
ե) Բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ իրավախախտումները նվազագույնի հասցնելու, վարչական իրավախախտումները արագ բացահայտելու, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարման պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացման վերաբերյալ.
զ) կատարում է Բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ.
է) կազմակերպում է Ծառայության փաստաթղթաշրջանառությունը.
ը) նախապատրաստում և Բաժնի պետին է ներկայացնում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ստացված դիմում-բողոքների վերաբերյալ կազմված ներքին և ելից գրությունների նախագծերը.
թ) Բաժնի պետի հանձնարարությամբ սահմանված ժամկետներում նախապատրաստում և Բաժնի պետին է ներկայացնում պետական վիճակագրական ծառայությանը ներկայացվող համապատասխան հաշվետվություններ.
ժ) իր իրավասության սահմաններում կազմում է իր կողմից կատարված աշխատանքների մասին կիսամյակային և տարեկան հաշվետվություններ.
ժա) անհրաժեշտության դեպքում, Բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

ժբ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և Բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
ժգ) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը.
ժդ) իր լիազորությունների շրջանակներում, մասնակցում է Երևան քաղաքում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հանրային սննդի, հողօգտագործման, առևտրի և սպասարկումների, կրթության և մշակույթի, սպորտի, բնապահպանության բնագավառներին առնչվող օրենսդրությամբ սահմանված նորմերի պահպանման, և իրականացման և դրանց պահանջների կատարմանն ուղղված՝ Բաժնի կողմից կազմակերպվող համապատասխան միջոցառումներին.
ժե) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ, Հողային, Քաղաքացիական օրենսգրքերի, «Առևտրի և ծառայությունների մասին», «Գովազդի մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Քաղաքաշինության մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների, Աշխատակազմի և Ծառայության կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- աշխատանքային ստաժ և փորձ չի պահանջվում:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի դեկտեմբերի 3-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515132):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ